ՆՈՐ-ԴԱՐ

№ 177 ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ Հաբաթ 19 Հոկտեմբերի 1885 Հաբաթ 19 Հոկտեմբերի ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ № 177

Տարեկան 10 րուբլի. վեց ամիսը՝ 6 րուբլի. երեք ամիսը՝ 3 ր. 50 կ. Հատով 5 կոպէկ։
Բաժանորդագրվում են Թիֆլիսում մխիթարեան վանքում։

Խմբագրության հասցէն՝ Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“ կամ Tiflis. Rédaction «Nor-Dar»։

Խմբագրությունը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարությունները ընդունվում են ամեն լրագրներով։ Յայտարարությունների բաժինն 2 կ., բնկալումների համար կրկնապատիկ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

Առաջնորդող.—Բալկանեան Թերակղզու դրութիւնը։

Քրոնիկոն.—Լուրեր։ Մահմեդականները և Հայերը Ղարաբաղում։

Թղթակցութիւններ.—Վաղարշապատ։

Բազմազան.—Լուրեր։

Խառնուածք։

Հեռագիրներ։

Յայտարարութիւններ։

Բանասիրական.—Շքաձնանով վարձատրուածը։

Թիֆլիս, 18 հոկտեմբերի 1885 Թ.

ԲԱԼԿԱՆԵԱՆ ԹԵՐԱԿՂԶՈՒ ԴՐՈՒԹԻՒՆԸ։

—

Բալկան թերակղզու վերայ բօլղարական առանց արիւնհեղութեան կատարուած յեղափոխութիւնից առաջացած շփոթ դրութիւնը շարունակվում է և մեծ պետութիւնները մինչև օրս այդ թերակղզու վերայ՝ գործերը մի վերջնական կարգի չեն բերել, չը նայելով Պօլսում տեղի ունեցած դեսպանախորհուրդներին։

Այսքանս երևում է, որ մեծ պետութիւնները բօլղարական յեղափոխութեան դէմ են և աշխատում են օրքան կարելի է պահպանել նախկին դրութիւնը Բալկանեան թերակղզու վերայ։ Իշխան Բիսմարկի բերան „Norddeutsche Allg. Zeit“-ը բացարձակ յայտնում է, որ Եւրոպայի խաղաղութիւնը չը պիտի խանգարուի, որովհետև մեծ տերութիւնների հրպատակ 300 միլիօնից աւելի խաղաղ բնակիչները չեն ուզում ենթարկուել պատերազմի աղէտքներին և թշուառութիւններին, որ ինչ է Բալկանի վերայ բնակուող ընդամենը մի վեց միլիօնից բազկացած զանազան մանր պետութիւնների հպատակները պատերազմը իրենց համար օգտաւէտ են համարում։

Մեծ պետութիւնները միասին թիւրքիայի կողմն են և ճանաչում են Սուլթանի իրաւունքները, թէպէտև Աւստրիան առանձին առած աւելի Սերբիայի կողմն է, Անգլիան՝ բօլղարացիների, Ֆրանսիան՝ յոյների...իւրաքանչիւրն էլ իրենց առանձին շահերի տեսակէտից։

Հէնց այդ է պատճառը, որ Սերբիան և Յունաստանը պատերազմի աւելի մեծ պատրաստութիւններ են տեսնում և զօրքերը երկրի սահմաններից չեն հեռացնում, չը նայելով, որ մեծ պետութիւնների ներկայացուցիչները միասին դրանց ուղարկած ծանուցագրի մէջ դատապարտում են պատերազմական ցոյցերը և հասկացնում են, որ Բերլինի դաշնագիրը անփոփոխ պետք է մնայ և գրանք մեծ պետութիւններից օգնութեան յոյս չը պիտի ունենան։

Տեսնենք թէ Պօլսում կայանալիք դեսպանաժողովը ինչ միջոցներով պիտի կարողանայ թէ ընդհանուր խաղաղութիւնը պահպանել թէ Ռումելիայի և Բօլղարիայի միութիւնը ճանաչել, պահպանելով Բերլինեան դաշնագիրը և Սուլթանի իրաւունքները և թէ Սերբիային ու Յունաստանին հաշտեցնել բօլղարական միութեան հետ առանց նրանց վարձատրելու —Սուլթանի հաշուով։

Ո՛ր պատերազմ բացուի — դա մի անսպասելի և նոր բան չի լինիլ. յայտնի է որ արևելեան խնդիրը առանց պատերազմի չէ լուծուել։ Նոր է արևելեան խնդրի մէջ այն երևոյթը, որ եւրոպական հաւասարակշռութեան պաշտպան հանդիսացողները՝ Բալկանեան մանր տէրութիւնները են և թէ այս անգամ արևելեան պատերազմը չը պիտի նշանակէ որ քրիստոնեայ ազգերը պատերազմում են մահմեդական բռնութեան դէմ, այլ թէ քրիստոնեան քրիստոնեայի, եղբայրը եղբօր դէմ է պատրաստվում թիւրքերի հետ միացած։

Յունաստանը ուզում է միանալ Թիւրքիայի հետ, միայն թէ բօլղարական միութիւնը խափանուի, և նախկին դրութիւնը վերականգնուի։

Սերբիան զգալով, որ ինքը Թիւրքիայի դէմ պատերազմելով չը պիտի կարողանայ իւր երկիրը ընդարձակելու, դէմ է բօլղարական միութեան և Բալկան թերակղզու վերայ «Հաւատարակշռութիւնը» պահպանելու համար պատրաստ է յարձակուել Բօլղարիայի վերայ։

Մենք տեսնում ենք, որ ոչ ոք իւր պահանջներից յետ չէ կանգնում, միևնոյն ժամանակը խաղաղութիւնը ուզում են պահպանել Բալկան թերակղզու վերայ։

Մինչև օրս դեռ գործերը այդ դրութեան մէջն են։

Ս. Ս.

ՔՐՈՆԻԿՈՆ

ՇԱԹՏԻՑ.—պ. Ա. գրում է մեզ. «Ես մի օր պատուէր ստացայ իմ բարեկամից գնալու Փերման (Նովօչէրկասկ) զանազան առարկաները գնելու։ Սերաֆուզու վագոններից դեռ նոր էինք դուրս եկել, երբ իմ ուղարձութիւնը գրաւեց մի մարդ, որը մշակ էր կանեխ ինչ գործի մտնելը չը գիտենալով՝ որովհետև ինքն էլ հարուստ էր, ուստի ամուսնացաւ մի գեղեցիկ աղջկայ հետ։

Նրանք փարիզում այնպէս էին ապրում, ինչպէս և հարուստ բուրժուային մեծամասնութիւնը, բայց բարձր դասակարգի մէջ չընդունուեցան։ Նրանք չափազանց հպարտանում էին, որ երկու գնդապետների և մի դեսպուտատի հետ, որ ապագայում մինիստրներ կարող էին դառնալ՝ ծանօթ էին։

Սակայն չքաւորան ստանալու ցանկութիւնը և ոչ մի րոպէ հանգստութիւն էին տալիս փառասէր Սակերմաններին։ Նա ամենաանբաղդատ մարդն էր համարում իրեն, որ իրաւունք չունէր իւր վերնագրեալ գումարը ժապաւէնով զարդարելու։

Չափազանց վերաւորվում էր նրա ինքնասիրութիւնը—երբ բուլվարում չքաւնչանով մէկին պատահում էր։ Սրտում ինագուն նախանձով և գաղտագողի դիտում էր այս բաղդի զաւակներին։ Երբեմն, ճաշերից յետոյ, երկար շրջագայելիս, սկսում էր, ժամանակը ինչպէս սպանելիքը չիմանալով, իւր մտքումը հաշուել բոլոր չքաւնչանաւոր անձերը, և կրկնում էր. „Տեսնենք Մագդալինի եկեղեցուց մինչև Դրուօ փողոցը քանիքը կը պատահի“։

Եւ նա կամաց ծանրացնում էր իւր քայլերը և ուշադրութեամբ գիտում էր անցուդարձ անողներին։ Նրա վարժուած աչքը արդէն հեռուից որոշում էր իղձալի կարմիր ժապաւէնը։ Ընդգայութեան վերջում, Սակերմանը մինչ զարմանում էր իւր դիտողութիւնների հետևանքի վերայ. «Ուրեմ հատ առաջին, և տասնուերեք հատ էլ երկրորդ կարգի չքաւնչաններ» ասում էր նա. չափազանց շատ է. ինմարութիւն չի ասա—իւրաքանչիւրին և ամենքին չը քանչանով վարձատրելը։ Տեսնենք վերջապէս քանիսը կը պատահեն“։

Առանց շտապելու, Սակերմանը էլի յետ էր վերադառնում. նա չափազանց նեղանում էր երբ ամբոխի խառնուածքը իւրաքանչիւրին ուշադրութեամբ դիտելու արգելք էր լինում։ Որովհետև այդ մէջողին մէկին կամ միւսին կարող էր աչքից ձգել։

Նա մինչև անգամ գիտէր այն վողոցները, ուր աւելի չաճախ կարելի էր չքաւնչանաւոր մարդկանց պատահել։ Այդ կողմից առաջին տեղն էր բռնում Պալէրօյալը։ Իսկ Խազազութեան վողոցում Օպերայի ծառուղուց աւելի էր նեղացնում, որ նա տուն վերադառնալիս այնպէս էր տրամադրուած լինում — ինչպէս դեռ նոր քայլը խորհրդիների հոգը առնող ազգատը։

—Արդեօք այս անպիտաններից չնաշ պիտի ազատուինք, բարձր ձայնով քաղքում էր նա։

—Ինչ է պատահել այսօր քեզ, զարմացած հարցնում էր կինը։

—Ինչ է պատահել. չափազանց վրդովուած եմ. ամեն մի քայլում—անբաւութիւններ են։ իմ կարծիքով հաւատարականները բոլորովին իրաւացի էին—երբ յեղափոխութիւն էին սկսում...

Սակայն ճաշերից յետոյ նրան կարծես մի բան փողոցն էր քաշում. նա այնտեղ՝ գոնէ ոսկերիչների պատուհանից կախուած չքաւնչաններով էր զուարճանում։ Նա ուշադրութեամբ դիտում էր բազմագոյն և բազմաձև նշանները. նա ցանկանում էր, որ այդ բոլորը, չանկարծ, մի անգամից ստանար, և հասարակական հանդիսի մէջողին, ամբոխով լցուած դահլիճում իւր ներկայութեամբ մարդկանց աչքերը շլացնէր. իւր երևակայութիւնների մէջ նա իրեն երևակայում էր հանդիսի պարագլուխ—վրից մինչև գո-

---

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՇՔԱՆՇԱՆՈՎ, Վ. ԱՐՁԱՏՏՈՒՆԸ.

(Պիւսի գը-Մօպասսան)

—

Կան մի քանի մարդիկ, որոնք ծնվում են որոշեալ գերակշռող բնազդումներով, չյանկի պաշտօնի համար, կամ ուղղակի սահմանի ձգտմամբ դէպի մի որև իցէ բան և այս չատկութիւնը, հէնց որ սկսում են մտածել և խօսել՝ արդէն յայտնվում է նրանց մէջ։

Պ. Սակերմանը արդէն երեխայութիւնից տոգորուած էր մի գաղափարով՝ —այդ չքաւնչանները ստանալու միտքն էր։ Դեռ ևս մանկութեան միջոցին, նա սերում էր կլակիւայ, պատուոյ ասպետի խաչով հրճուել, ինչպէս որ մի քանի տղայք էլ զինուորական գլխարկով են զուարճանում։ Այսպէս նա իւր ժապաւենով և փայլուն մետադեայ աստղով զարդարած կուրծքը դուրս ցցած, հպարտ-հպարտ, մօր ձեռիցը բռնած, ման էր գալիս փողոցներում։

Նա ոչ մի գիտութեան մէջ յաջողութիւն չունեցաւ. նա մինչև անգամ բակկալաւրի ստուգման էլ չը ստացաւ։

Եւ ինչ գործի մտնելը չը գիտենալով՝ որովհետև ինքն էլ հարուստ էր, ուստի ամուսնացաւ մի գեղեցիկ աղջկայ հետ։

Նրանք փարիզում այնպէս էին ապրում, ինչպէս և հարուստ բուրժուային մեծամասնութիւնը, բայց բարձր դասակարգի մէջ չընդունուեցան։ Նրանք չափազանց հպարտանում էին, որ երկու գնդապետների և մի դեսպուտատի հետ, որ ապագայում մինիստրներ կարող էին դառնալ՝ ծանօթ էին։

Սակայն չքաւնչան ստանալու ցանկութիւնը և ոչ մի րոպէ հանգստութիւն էին տալիս փառասէր Սակերմաններին։ Նա ամենաանբաղդատ մարդն էր համարում իրեն, որ իրաւունք չունէր իւր վերնագրեալ գումարը ժապաւենով զարդարելու։

Չափազանց վերաւորվում էր նրա ինքնասիրութիւնը—երբ բուլվարում չքաւնչանով մէկին պատահում էր։ Սրտում ինագուն նախանձով և գաղտագողի դիտում էր այս բաղդի զաւակներին։ Երբեմն, ճաշերից յետոյ, երկար շրջագայելիս, սկսում էր, ժամանակը ինչպէս սպանելիքը չիմանալով, իւր մտքումը հաշուել բոլոր չքաւնչանաւոր անձերը, և կրկնում էր. „Տեսնենք Մագդալինի եկեղեցուց մինչև Դրուօ փողոցը քանիքը կը պատահի“։

Եւ նա կամաց ծանրացնում էր իւր քայլերը և ուշադրութեամբ գիտում էր անցուդարձ անողներին։ Նրա վարժուած աչքը արդէն հեռուից որոշում էր իղձալի կարմիր ժապաւէնը։ Ընդգայութեան վերջում, Սակերմանը մինչ զարմանում էր իւր դիտողութիւնների հետևանքի վերայ. «Ուրեմ հատ առաջին, և տասնուերեք հատ էլ երկրորդ կարգի չքաւնչաններ» ասում էր նա. չափազանց շատ է. ինմարութիւն չի ասա—իւրաքանչիւրին և ամենքին չը քանչանով վարձատրելը։ Տեսնենք վերջապէս քանիսը կը պատահեն“։

Առանց շտապելու, Սակերմանը էլի յետ էր վերադառնում. նա չափազանց նեղանում էր երբ ամբոխի խառնուածքը իւրաքանչիւրին ուշադրութեամբ դիտելու արգելք էր լինում։ Որովհետև այդ մէջողին մէկին կամ միւսին կարող էր աչքից ձգել։

Նա մինչև անգամ գիտէր այն վողոցները, ուր աւելի չաճախ կարելի էր չքաւնչանաւոր մարդկանց պատահել։ Այդ կողմից առաջին տեղն էր բռնում Պալէրօյալը։ Իսկ Խազազութեան վողոցում Օպերայի ծառուղուց աւելի էր պատահում ինչպէս և իւրաքանչիւր բուլվարի աջ կողմում—ձախից աւելի։

Իսկ պատուոյ պատկան չքաւնչանաւորներն էլ նոյնպէս որոշեալ սրճարաններին և օպերաներին էին առաւելութիւն տալիս։ Իւրաքանչիւր անգամ ճանապարհի վերայ—անցուդարձը արգելելով — հաւաքուած տարիքաւոր կամ ալևոր մարդկանց խումբի էր պատահում։ „Ահա, ասում էր նա ինքն իրեն, երեք սրանք պատուոյ լեգէոնի „աստիճանը ունին“ և մօտենալով—կարծես մի բան քաշում էր նրան դէպի նրանց,—ողջունում էր։

Սակերմանի կարծիքով, առաջին աստիճան ունեցողների մարմնի կազմութիւնը բոլորովին ուրիշ է լինում. նրանք բոլորովին ուրիշ տեսակ են բռնում իրենց գլուխը. հէնց առաջին անգամից կարելի էր հասկանալ, որ այս մարդիկը աւելի բարձր պատուի և վարձատրութեան են արժանացած։

Իսկ երբեմն էլ Սակերմանը սարսափելի կերպով կատաղում էր այս չքաւնչանաւորների վերայ. այդ միջողին սօցիալականին,—այդ հիմունք տասլողի կոյր չարութիւնն էր գալիս նրա վերայ։

Կարմիր ժապաւէնը նրան այնքան

300 րուբլիով. մինչև քահանայի իմանալը նա արդէն մարսել էր փողը և գանգատն էլ ապարդիւն մնաց։ Դա Թիֆլիսում 15 օր իշխանել օր Ֆրանսիական հիւրանոցում (Գրանդ-Հօտէլ) և առանց վճարելու արած ծախքերը անհետացել։ Նա ման գալիս է եղել կառքերով, կառապանի կողքին է սպասաւոր նստեցրած։ Նա տասն րուբլիանոց գլանակներ էր ծխում, բայց երբ որսը պակասեց, պաշարն էլ սպառուեց, էլի գնաց իր բարեկամների—զամբիւղման ածողների մօտ և նրանց հետ ապրեց առ ժամանակ։ Քանի ամիս է որ էլ չենք տեսնում պարոն բժշկապետին!!!

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ լրագիրների ասելով Բելգիական երկրաչարժ պ. Ֆօ-Դէերը այս օրերս հասել է Պետերբուրգ և քաղաքային խորհրդարանից Թոյլտուութիւն է խնդրում Պետերբուրգի մի քանի փողոցներում հիմնել էլեկտրական երկաթուղի։

—

Մայրաքաղաքի լրագիրների ասելով ս. Սինօդը արգելել է մասնաւոր անձնքներին՝ ազօթագրեր տպագրելու։

—

Քաղաքումս այժմ խօսակցութեան առարկայ է գործած պ. պ. Իզմիրեանի և. Թամամշեանի դատաստանական գործը, որը կայանում է հետևեալում։ Անցեալ սեպտեմբերի 30-ին պ. Ա. Իզմիրեանը մտնում է Թիֆլիսի վաճառականական բանկը և այդտեղ պարտամուրհակի (վեքսել) վերաբերութեամբ վէճ է բացվում պ. Իզմիրեանի և բանկի կառավարիչ պ. Մ. Թամամշեանի մէջ։ Վէճի ժամանակ պ. Թամամշեանը վերցնում է սեղանից գրչակալը և նետում է Իզմիրեանի վերայ, որով վերջինս գլուխը պատառուած, և արիւնաշաղախ ընկնում է տեղն ու տեղը։ Վերաւորուածը բաւական ժամանակ մնում է անզգայ և վիրքը ուշքի գալով, և հարկէ իսկոյն սկսեց պատրաստութիւններ տեսնել. իւր հարուա-

---

Տպարան Ա. Ա. Ալամդարեանց։ Տպագրուած է Թիֆլիսում, Ալեքսանդրեան հրապարակ, № 1։

Նոր կին տիկնոջ հետ.

— Ես 19-ի տարեկան էի, երբ ամուսնացա։ Ամուսինս 23-ից 24 տարեկան էր։ Նա ինձ շատ էր սիրում, ես էլ նրան։ Մեր ամուսնական կյանքը անցնում էր ամենաերջանիկ պայմաններում։ Ամուսինս ինձ ոչ մի բանում չէր մերժում։ Ես ամեն ինչ կարող էի ունենալ, ինչ որ ուզում էի։ Ամուսինս ինձ ամեն օր նոր զարդեր էր բերում։ Ես ամեն օր նոր զգեստներ էի հագնում։ Ամուսինս ինձ տարին մի քանի անգամ ուղարկում էր Փարիզ, որ այնտեղ նոր նորաձևություններ գնեմ։ Ես ամեն ինչ ունեի, ինչ որ սիրտս ուզում էր։ Ամուսինս ինձ ամեն ինչ էր տալիս։ Ես ամեն ինչ ունեի, ինչ որ ուզում էի

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ

Ս. Ֆ-ին, Ալեքսանդրիա։ Ձեր նամակը ստացանք։ Ուրախ ենք, որ մեր թերթը ձեզ դուր է գալիս։ Ինչ վերաբերում է ձեր հարցին, ապա ասենք, որ ամենայն ուրախությամբ կհրատարակենք ձեր նամակը, եթե միայն ձեր անունը գրեք ամբողջապես

պարտականութիւն դնեն ամենի վերայ այդ եղբայրասպան պատերազմի առաջը առնելու կամ նախազգուշացնելու, որի հետևանքը այդպէս վերովում է Եւրոպային, նա մանաւանդ Ռուսիային։ Բայց Ռուսիան, որը օգնեց նրանց ազատուելու օտարի լծի տակից, Ռուսեան, որի համար այդ ազգերը ցեղակից և դաւանակից են, Ռուսիան որը նրանց վերածնութեան համար ահագին զոհեր արեց, այդ գործի վերայ չի կարող նայել այն տեսակէտից, ինչ տեսակէտից նայում են թէ հեղինակութիւն ունեցող լրագիրները և թէ միւս պետութիւնները։ Նրան երկպատիկ է վերովում այդ եղբայրասպան պատերազմի հետևանքները և նա ամենից աւելի պիտի աշխատէ գրա առաջն առնելու։ Ահա, թէ ինչու համար նա պարտականութիւն համարեց յանձն առնել իւր վերայ այդ պաշտօնը, որը, մի քանի լրագիրների նկատողութեամբ, կարող է զրկել նրա բոլղարական ազգի համակրութիւնից։ Բայց մերթ հարցնում է „Journal de St.-Petersburg“-ը Ռուսիան պիտի հպատակի այդ ազգերի պահանջներին, որից չը նայելով կարող է ծագել ոչ թէ եւրոպական պատերազմ, այլ նաև պատերազմ սլաւոնների և ուղղափառների մէջ, սերբիի և բոլղարների մէջ, բոլղարների և յոյների մէջ, որի ժամանակ վերջիններս կիսալուսնին պաշտպան կը հանդիսանային։ Կար ժամանակ, որ Արեւելքում ընդունում էին միայն երկու քանակ. քրիստոնէական և մահմեդական։ Այդ տարբերջանում կիսալուսինը մէկի դրօշն էր, իսկ խաչը միւսներինը։ Ներկայումս գործերի դրութիւնը փոխուեցաւ։ Կարդացէք հելլէնական առաջնորդների յայտարարութիւնները, հրաւիրագիրները, բրօշիւրները և լրագիրները։ Նրանք աւելի յարմար են գըտնում, տեսնել իրենց ցեղակից ազգերին երկար տարիներ մնալ վրաշների լծի տակ, քան թէ բոլղարական և սերբիական կառավարիչների իրաւունքների տակ։ Նոյնը լինում է և միւս բանակներում։ Այդ շատ տխուր տեսարան է, սակայն համաձայն է Ճշմարտութեան հետ։ Ինչ է մնում անել, նկատի ունենալով այսպիսի տեսարանը։

—

Մանգալայից հաղորդում են անգլիական լրագիրներին, որ այնտեղ մեծ խռովութիւն է թագաւորում։ Զինաստանից արդէն ուղարկել են զօրքին հրացանները և փամփուշտները և չոգենաւով ուղարկել են Մինգլու ուտելիքի պաշար։ Գնում են այնտեղ նաև 3,000 հոգի։ 2,000 հոգի ուղարկուեցան Տունգլօ։ Բիրմանական գետեզրեայ բերդերը պաշտպանողական դիրք են ընդունում։

—

Սիմլից հեռագրում են, որ Հնդկական կառավարութիւնը արդէն ձեռք է գարկել ամրացնելու և շատացնելու բերդապահների թիւը բրիտանական Բիրմանիայում։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Սիմլից հաղորդում են, որ աւղանական էմիրի հետևեալ կարգադրութեան մէջ Սողոմոնի իմաստութեան չունչն է փչում։ Կարուլից հասած լուրերից իմանում ենք, որ աւղանական էմիրը հրամայել է իւր երկրի գլխաւոր քաղաքների ամենաերևելի տեղերում արկղներ շինել, որոնց մէջ այդ քաղաքի բնակիչները կարող են դնել իրանց գրաւոր գանգատները կառավարութեան ատիճանաւորների վերայ։

***

Ինքնասպանութիւն մահուան հրկիզից։—„Italie“ լրագրի ասութեամբ, Նէապօլսի Բանիոլի հերցոգը մի պատուաւոր և հաւատարիմ ծառայ ունէր, որը լսելով Իտալիայի խոլերայի մասին սաստիկ երկիւղի և յուզմունքների մէջ բնկաւ, վախենալով, վարակուիլ այդ տարաժախտիկ տկարութիւնովը և մեռնել։ Եւ վերջապէս վախենալով տկարանալ խոլերայով, նա հոկտեմբերի երկուսին գնաց մատուռը, վառեց այնտեղ բոլոր մոմերը, պառկեց Աստուածամօր պատկերի առաջ և զարկեց իրան սաբրով Ճանակով։

***

Ամենալաւ հաբկատուները։—Իշխան Բիսմարկը իւր արդիւնքից տարեկան 6,120 մարկ հարկ է վճարում, պետական քարտուղար կոմս Հայֆէլդը—5,162, մինիստր Լիւցիուսը—2,520, մինիստր Մայթախը—1,440 մարկ. բայց այդ բոլոր գերապանցութիւնները, համեմատելով առևտրական և ֆինանսական աշխարհի հարուստների հետ, ոչինչ են կազմում։ Օրինակի համար, առևտրական խորհըրդական Բէյնէրհդէրը վճարում է իւր արդիւնքից 66,000 մարկ հարկ։ Հանդեմանը — 64,000, Շվաբախը — 34,000 մարկ։

***

Վիկտօրիա թագուհու կառավարութեան յիսնամեայ յոբելեանը։—1886 թ. յունիսի 20-ին կը լրանայ Անգլիայի Վիկտօրիա թագուհու գահակալութեան յիսնամեակը։ Անգլիական լրագիրները հաղորդում են, որ Լօնդօն քաղաքի զանազան ընկերութիւնները այժմեանից իսկ սկսել են պատրաստութիւններ տեսնել տօնախմբելու այդ օրը, որքան կարելի է չքեղ և հանդիսաւոր կերպով։ Լօնդօնի ընկերութիւնները, որոնք քաղկացած են նախկին լօրդ-մէրէրից, օլդերմեններից և քաղաքային խորհըրդի ամենահարուստ անդամներից, կամենում են մի օր և է կերպիւ յաւերժացնել այդ օրը, որովհետև սկսեալ Վիլհելմ տիեզերակալից մինչև այսօր, ոչի դարի ընթացքում, այսպիսի երկարատև կառավարութիւն պատահում է միայն այս երրորդ անգամը։

***

Այրասպան կինը։—„Заря“ լրագրին գրում են Վասիլիովից, որ մօտերումս Կիտին-Գօրօխ գիւղում կատարուեցաւ հետևեալ արիւնահեղ դրաման։ Տօպչիկ անունով գիւղացին վերադարձաւ տուն հարբած, կինը սկսեց այդ բանի համար նրան նախատել, բայց նա ուշ չը դարձրեց, գնաց և քնեց։ Այդ ժամանակ նրա կինն Եւդոկիան, վեր առնելով կացինը հարուածեց մարդու Ճակատին։ Հարուածից Տօպչիկը զարթեցաւ և տեսնելով, որ կինը բրդած ունի ձեռքում դանակ, սկսեց խնդրել „մի մորթիր ինձ“։ Այն ժամանակ Եւդոկիան հինգ վէրք ևս պատճառեց մարդուն։ Այդ միջոցին զարթեցաւ նրանց 7 տարեկան Գրիգօրիա աղջիկը, որը մօտիկ պառկած էր։ Տեսնելով, թէ ինչպէս մայրը դանակով աշխատում է, լաց եղաւ և գոռաց. «մի սպանիր հայրիկին,» Հանգստացնելով աղջիկը „քեզ համար աւելի լաւ կը լինի աղջիկս“ խօսքերով, Եւդոկիան, ինչպէս նա ինքը յոյց տուեց, երկիւղ կրելով, որ „կը կենդանանայ“ մարդը, երկու անգամ ևս հարուածեց նրան, ցետ այնորիկ վախթախեց մարդուն քաթանով և երբ արիւնը ցամաքեց, բռնեց նրա ոտերից, քաշ տուեց բակը և ծածկեց մարմինը յարդով։ Վեռադառնալով խրճիթ, նախ և առաջ նա սկսեց լուանալ յատակը, նստարանը, որի վերայ քնած էր մարդը և սպիտակացրեց պատերը։ Համոզուելով, որ հետքերը ծածկուած են, Եւդոկիան հանգիստ պառկեց ու քնեց։

Առաւօտեան դէմ յանցաւորը, սաստելով աղջիկանը լուռ լինել, սկսեց իւր սովորական գործերովը պարապել։ Դիշերը, հանելով դիակը յարդի միջից, քաշ տուեց պէսի լճի ափի մօտ բուսած մացառի տակը։ Դիակը այնպէս վարպետութեամբ տեղաւորեց, որ անց ու դարձ անողը, տեսնելով Տօպչիկին եբեան չի վայր ընկած, ձախ ձեռքը դուրսը մեկնած, իսկ աջը իրանի տակ, կը կարծէը, թէ քնած է։ Հետևեալ օրը սպանութիւնը տարածուեցաւ ամբողջ գիւղում։ Սպանութեան տեղը խակոյն ներկայացաւ պրիստաւը։ Նրա առաջին հարցմունքին, Եւդոկիան ասաց, որ յանցաւորը—ինքն է։

***

Մօտ օրերումս Նիւ-Եօրքի „General Session“ կոչուած դատարանում մի ենթևելի գործ քննուեցաւ։ Քննվում էր Johu Hannon անունով գիշերապահի սպանութեան գործը, որին սպանել էր քաղաքի սրճկայ Սիմսօմ անունով մի մարդ։ Գործը ինքն ըստ ինքեան սովորական գործերից մինն էր, միայն թէ այլ քննութեան գլխաւոր հետաքրքրութիւնը կայանում էր նրանում, որ երդուեալներից և ոչ մինը յանձն չէր առնում այդ գործի պատասխանութիւնը, այն ինչ դատարանը հակառակ նրանց կամքի, պնդում ու ստիպում էր նրանց ընդունելու պատասխանութիւնը։ Գործի քննութիւնը սկսուեցաւ դատարանում սեպտեմբերի 9-ին, որի համար հրաւիրուած էին 100 հոգի քաղաքացիները, որոնցից պիտի ընտրուէին 12 երդուեալները, բայց ներկայ գտնուեցան միայն 50 հոգի։ Այդ 50 հոգուց գրատուեցաւ մինը, որ ընդունելով դատարանի վճիռը, համաձայնեցաւ յանցաւորին մահուան դատապարտելու։ Այդ մէկն էլ ընտրուեցաւ երդուեալ, իսկ միւս 49 հոգին երդմամբ յոյց տուին, որ նպաստանքով իրաւունք չունին դատապարտելու յանցաւորին՝ մի որ և է յանցանքի համար կախաղան հանելու։ Քննութեան միւս օրը դարձեալ կանչուեցան 100 քաղաքացիները, նորից ներկայ գտնուեցան 50 հոգի, որոնցից միայն հինգը յոյց տուին երդմամբ, թէ յանցաւորը արժանի է կախելու։ Բացակայ գտնուող 50 հոգուց մինին դատարանը ենթարկից 50 դօլլար տուգանքի։ Չորեքշաբթի օրը 50 քաղաքացիներից եկան դատարան մեայն 30-ը, որոնցից հազիւ թէ կարողացան երկուսին ընտրել երդուեալները, իսկ բացակայ 20 հոգու ամեն մէկին ենթարկեց դատարանը 250 դօլլար տուգանքի։ Հինգշաբթի կանչուածներից չեկան 14-ը, որոնցից ամեն մինը դարձեալ ենթարկուեցաւ 250 դօլլար տուգանքի, իսկ ներկայ գտնուող 34 հոգուց յաջողուեցաւ ընտրել չորսին և այդպիսով լրացաւ 12 երդուեալների թիւը։ Այդ չորս օրուայ ընթացքումը, կանչուեցան դատարան ընդամենը 300 հոգի, որոնցից մեծ դժուարութեամբ յաջողուեցաւ ընտրել 12 երդուեալներ, որոնք և ընդունեցին յանցաւորի մահուան դատապարտելու կարևորութիւնը, իսկ վերջին երեք օրերում դատարանով կանչուած 74 բացակայ գտնուող անձինքները բոլորը միասին ենթարկուեցան մօտաւորապէս 16,000 դօլլար տուգանքի. այսինքն, աւելի քան 31,000 րուբլի։

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԴՈՐՏԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

16 Հոկտեմբերի.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Այսօր ժամանեց Պետերբուրգ ներքին գործերի մինիստրը։

Տագանրօգի մաքսային գործի վերաբերութեամբ, Սենատը փոխեց Խարկովի դատաստանական պալատի վճիռը 1) արդարացնելով յանցաւոր Վալեանօյին 2) Վալեանօյի վերաբերեալ քրէական կանոնագ. 362 յօդուածի անյարմարութիւնը, 3) մաքսական պահանջողութեան անյարմարութիւնը, 4) յանցաւոր Սֆաելլօյին յարմարեցրած 513 յօդ. անկանոնութիւնը։ Վճռուեցաւ վերոյիշեալ անձինքների գործը յանձնել Խարկովի դատաստանական Պալատի միւս դեպարտամենտին, նոր վճիռ կայացնելու համար, համաձայն երդուեալների վերոկիչի։

Պալատի սրբկուրբրի բողոքը, քաղաքական դատախազների և պաշտպանողների իրաւունքները թողնել առանց հետևանքի։

ՎԵՆՆԱ. Սերբիական կառավարութիւնը յայտնում է, որ Բերլինի դաշնագրութիւնը սրբազան է համարում և խաղաղութիւնը պահպանելու համար ամեն ինչ կանէ։

Կ.-ՊՕԼԻՍ. Բոլոր պետութիւնները համաձայնութիւն են յայտնել մասնակցելու դեսպանաժողովին։

ԼՕՆԴՕՆ. Ինչպէս լսւում է, Բիրմանական թագաւորը ապստամբել է և Մանդալայում յեղափոխութիւն է։

17 Հոկտեմբերի.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Ներքին գործերի մինիստրութեան կառավարչի շրջաբերականով կարգադրուած է. զինուորական ծառայութիւն մտնող այն աշակերտների միջնորդութիւնը կարելի է ընդունել միայն, որոնք հակառակ զինուորագրութեան 53 յօդ. կանոնագրութեան կամենում են յետաձգել զինուորական ծառայութեան մէջ օգնելու ժամանակամիջոցը և որոնք մերձակայ դպրոցական վարչութիւններից կունենան յարգելի վկայութուղթ իրենց ուսման և վարուց համար ու կը ներկայացնեն զինուորագրութեան կառավարութեանը, յայտնելով ընդ նմին և պատճառները, որոնք արգելք են եղել նրանց ժամանակին աւարտելու իրենց ուսման ընթացքը։

Հոկտեմբերի 17-ից պետական բանկը կսկսի պահանջել լեռնային կառավարութիւններից տարեկան 5%։

«С.-Петербургскія Вѣдомости» լրագիրը հաղորդում է, որ պետական հողային բանկի բաժանմունքները գրաւ կընդունեն միայն տհմական ազնուականների կալուածքները և այդ կալուածքների մի մասը։ Փոխառուն պարտաւորվում է ստորագրութեամբ, մինչև պարտահատոյց լինելը, առանց իրաւունք ստանալու, պայմանները կապել ծախելու կամ կապալաւ տալու ոչ աւելի քան երեք տարի ժամանակով, կտրտելու այն անտառները, որոնք ենթարկուած են հարկատուութեան տակ։

ԿԱԼԿԱԹԱ. Բիրմանական թագաւորի սպանման և Մանդալայի յեղափոխութեան լուրը հերքվում է։

Խմբագիր-Հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅՈՑ ԹԱՏՐՈՆ

Պատիւ ունիմ յայտնելու, որ Թիֆլիսի նորակազմ Հայ դերասանական խումբը, իւր երկրորդ ներկայացում կը տայ հինգշաբթի երեկոյ, հոկտեմբերի 31-ին, նախկին Արծրունու թատրոնում կը խաղացուի

I

«ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱԽՇԿ»

կամ

«ԹՈՒՆԱՒՈՐՈՒԱԾ ԿԵԱՆՔ»

Դրամայ 5 գործողութեամբ. Թարգ. Փրանսերէնից

II

ԿՐՌԹ ԿՐՌԹ

Վոդ. 1 գործողութեամբ հեղ. Վ. Մազաթեանի. Հայերէն, ռուսերէն լեզուներով

Տեղերի գինը պակասեցրած է

Սկիսըն է 7½ ժամին

Տոմսակները վաղօրօք կարելի է ստանալ միայն կասսայում և այդէն ծախվում է։

Մանրամասնութիւնը ափիշայում։

Այս անգամ կը մասնակցէ խումբին պ. Յ. Քալանթարեանը։

Սաքիպեան

5—4

Լոյս տեսան Ֆ. Շմիդթի

ԲԻՆԻԱՄԻՆ ՖՐԱՆԿԼԻՆ

Երկրորդ տիպ.։

(Գինն է 40 կոպ.)

—

ԳԻՈՐԳ ՎԱՇԻՆԳՏՕՆ

Երկրորդ տիպ.

(Գինն է 60 կոպ.)

Թարգ. գերմ. Փ. Վարդանեան.

Վաճառվում են Կենդրոնական և Կովկասեան գրավաճառանոցներում։

Վաճառվում է պաշտօնական

ԳՆԱՑՔՆԵՐԻ ԵՐԹԵԿՈՒԹԻՒՆԸ «ԹԻՖԼԻՍ» ԿԱՅԱՐԱՆՈՒՄ.

Կառքեր, որոնք Ա՛նապաշէին դիշերկայարանները ուղևորում։

Թիֆլիսից դուրս են գալիս առաւօտեան 8 ժամին. Վլադիկաւկաս գալիս են երեկոյան 5 ժ.—11 րոպ. և 6 ժ.—43 րոպ. միջ

Վլադիկաւկասից գալիս են դնում առաւօտեան 9 ժամին։ Թիֆլիս գալիս են երեկոյան ժամի 4 և 44 րոպ. և ժ. 5—25 րոպ

Անդրկովկասեան երկաթուղին։

ԳՆԱՑՔՆԵՐԻ ԵՐԹԵԿՈՒԹԻՒՆԸ „ԹԻՖԼԻՍԻ“ ԿԱՅԱՐԱՆՈՒՄ։

Բաքուէ պատ. գնում է ժ. 8—35 րոպ. առ
Բաքուից „ գալիս է „ 10—25 „ գէշ
Բաքու . . . գնում է „ 10—55 „ գէշ
Բաքուից „ „ . . . գալիս է „ 8—„ „ յերե

ԹԻՖԼԻՍԻ ԵՒ ՍՈՒՐԱՄԻ ՄԷՋ.

Թիֆլիսից ապր.—Ա՛նապ. գնաց. գըդում է . . . . . ժ. 3—15 „
Սուրամից գալիս է . „ 8—4 „ առ

Дозволено цензурою. Тифлисъ, 18-го Октября 1885 г.

Տպարան Ա. Ա. Միխելսոնի ս. № 12. Типографія А. А. Михельсона, Гол. пр. д. № 12.